

Հրատարակվում է

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

SPONSORED BY
THE COUNCIL OF EUROPE

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

COLLECTION OF JUDGMENTS

Edited by Alvina Gyulumyan

Member of the Constitutional Court of the Republic of Armenia,

President of the Association of Judges of the RA

YEREVAN 2002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
ՀՀ Դատավորների միության նախագահ
Ալվինա Գյուլունյանի ընդհանուր խմբագրությամբ**

ԵՐԵՎԱՆ 2002

**Տպագրվում է ՀՀ Ղատավորների միության
խորհրդի որոշմամբ**

Խմբագիր

**ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ
Լիանա Հակոբյան**

Վճիռներն անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը
Մարինա Մխիթարյանը
Կարինե Բալայանը
Սոնա Հովհաննիսյանը
Վահե Ենգիբարյանը
Աննա Ղազարյանը

ՈՐՈՇՈՒՄ

Ասյա Անգելովայի՝ ըննդեն Բուլղարիայի ներկայացրած թիվ
38361/97 գանգատի ընդունելիության վերաբերյալ

Սարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք),
2000 թ. հունիսի 6-ին, նիստ գումարելով որպես Պալատ, կազմով՝ պրն Ջ.
Ռեսի, Նախագահ, պրն Ի. Կաբրալ Բարետո, պրն Վ. Բուտկևիչ, տկն Ն. Վաջիչ,
պրն Ջ. Յեդիգան, պրն Ս. Պելոնպա, տկն Ս. Բոտոուչարովա, դատավոր
և պրն Վ. Բերգեր, Բաժանմունքի քարտուղար,

ելնելով 1997 թ. սեպտեմբերի 20-ին Սարդու իրավունքների եվրոպական
դատարանին ներկայացված և 1997 թ. հոկտեմբերի 20-ին գրանցված
վերոգրյալ գանգատից,

ելնելով Կոնվենցիայի թիվ 11 արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետից,
ըստ որի՝ գանգատը քննելու իրավասությունը փոխանցվել է Դատարանին,
ելնելով պատասխանող Կառավարության ներկայացրած
բացատրություններից և ի պատասխան դրանց՝ դիմողի ներկայացրած
բացատրություններից,
խորհրդակցելով՝ որոշեց.

Փաստերը

Դիմողը Բուլղարիայի քաղաքացի է, ծնված՝ 1959 թ., ապրում է Ռազգրադում:
Դատարանում նրան ներկայացնում է Սոֆիայում գործող փաստաբան պրն
Յոնկո Գրոզկը:

A. Գործի առանձին հանգամանքները և գործին առնչվող ներպետական

օրենսդրությունն ու պրակտիկան տե՛ս՝ հիմնական վճռում:

ԳԱՆԳԱՏՆԵՐԸ

1. Դիմողը ներկայացրել է երեք գանգատ՝ հիմնվելով Կոնվենցիայի 2-
րդ հոդվածի վրա: Նա հայտնել է, որ իր որդին մահացել է ոստիկանության
կողմից դիտավորյալ պատճառված վնասվածքների հետևանքով, որ

նստիկանությունն իր որդու ստացած վնասվածքների համար պատշաճ բժշկական օգնություն չի ապահովել, ինչը, ի վերջո, հանգեցրել է նրա մահվան, որ պետական մարմինները չեն ապահովել գործի բազմակողմանի և արդյունավետ քննություն:

2. Դիմողը ներկայացրել է երկու գանգատ՝ հիմնվելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վրա: Նա հայտնել է, որ բացի գլխի վնասվածքից, որը հանդիսացել է իր որդու մահվան պատճառ, նա ստացել է նաև այլ վնասվածքներ, որոնք ակնհայտորեն ուստիկանության կողմից «վատ վերաբերմունքի» պատճառ են, և որ իշխանությունները չեն իրականացրել արդյունավետ և անաչառ քննություն:

3. Հիմնվելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի վրա՝ դիմողը գանգատվում է առ այն, որ իր որդու՝ 1996 թ. հունվարի 29-ի ձերբակալումն անօրինական էր և հակասում էր Ազգային ուստիկանության մասին օրենքի 35-րդ հոդվածին, քանի որ բացակայել է ձերբակալման գրավոր որոշումը:

4. Հիմնվելով Կոնվենցիայի 13-րդ հոդվածի վրա՝ դիմողը գանգատվում է 2-րդ և 3-րդ հոդվածների ենթադրյալ խախտումների կապակցությամբ արդյունավետ դատական պաշտպանության միջոցների բացակայության առիթով: Նա մատնանշում է, որ գործով իրականացվող վարույթները պատշաճ մակարդակով չեն տարվել և վկայակոչում է իր կողմից ներկայացված փաստարկները, որոնք բխում են 2-րդ և 3-րդ հոդվածներից: Բացի դրանից, նա հայտնել է, որ որոշ դեպքերում իշխանություններն իրեն ապատեղեկացրել են քննության ընթացքի և բացահայտումների վերաբերյալ: Նա գործի նյութերին ժամոթանալու թույլտվություն է ստացել ոչ շուտ, քան 1997 թ. փետրվարին:

5. Հիմնվելով Կոնվենցիայի 14-րդ հոդվածի վրա՝ դիմողը գանգատվում է կապված Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ և 13-րդ հոդվածների հետ: Նա հայտնում է, որ իր որդու «գնչուական» ծագումը քաջ հայտնի էր մասնակից ուստիկաններին և տղայի՝ այդ էթնիկական խմբի ներկայացուցիչ լինելու փաստն այնքան սուր էր ընկալվում ուստիկանների կողմից, որ վերջիններիցս մեկը նրան անվանել է «գնչու»՝ նույնիսկ իր պաշտոնական ցուցմունքում: Դիմողի ներկայացմամբ՝ ուստիկանների վերաբերմունքն իր որդու նկատմամբ որպես գնչուի՝ մահվան և հասցված վնասվածքների համար նշանակալից գործոն էր հանդիսանում:

ՎԱՐՈՒՅԹԸ

Գանգատը ներկայացվել է Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողով 1997 թ. սեպտեմբերի 20-ին և գրանցվել 1997 թ. հոկտեմբերի 30-ին:

1998 թ. մարտի 2-ին Հանձնաժողովը որոշել է գանգատը փոխանցել պատասխանող Կառավարությանը:

1998 թ. հունիսի 29-ին Կառավարությունը ներկայացրել է իր գրավոր բացատրությունները՝ այդ նպատակով սահմանված ժամկետի երկարաձգումից հետո: 1998 թ. հոկտեմբերի 26-ին դիմողը պատասխանել է՝ նույնպես ժամկետի երկարաձգումից հետո:

1998 թ. նոյեմբերի 1-ին, Կոնվենցիայի թիվ 11 արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառմամբ, գործը, Արձանագրության դրույթներին համապատասխան, հանձնվել է Դատարանի քննությանը:

1999 թ. ապրիլի 29-ին Դատարանը դիմողին իրավական օգնություն է տրամադրել:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

1. Կառավարությունը ներկայացրել է մի շարք նախնական առարկություններ: Ընդունելով դիմողի հայտարարությունները Կոնվենցիայի 2-րդ և 13-րդ հոդվածների կապակցությամբ՝ Կառավարությունը բացատրություն է տվել առ այն, որ դիմողը չի կարող պահանջել իրեն տուժող ճանաչել իր որդու իրավունքների նկատմամբ կատարված ենթադրյալ ոտնձգության համար՝ հիմնվելով 3-րդ, 5-րդ և 14-րդ հոդվածների վրա: Կառավարության կարծիքով՝ դրանք «զուտ անհատական բնույթի են» և այդ պատճառով դիմողը չի կարող պահանջել իրեն անձնապես տուժած ճանաչել:

Կառավարությունը գտնում է, որ գանգատը պետք է մերժել՝ ներպետական պաշտպանության միջոցներն սպառված չլինելու պատճառաբանությամբ: Նրանք պնդում են, որ դիմողը կարող էր Ազգային (Չանրապետության) զինվորական դատախազին և Գլխավոր դատախազին բողոքարկել Չանրապետության զինվորական դատախազության 1996 թ. դեկտեմբերի 18-ի որոշումը, որով հաստատվում էր զինվորական դատախազության մարմինների վարույթում գտնվող քրեական գործի կարճումը: Այդ բողոքարկման արդյունավետությունը հիմնավորվում էր այն փաստով, որ 1996 թվականին նման բողոքարկումների 36-ից 3-ը դրական արդյունք են ստացել: Բացի դրանից, դիմողը պետք է բողոքարկած լիներ 1997 թ. մարտի 20-ի Գլխավոր դատախազության այն որոշումը, որով հաստատվում էր այն քրեական գործի վարույթի կարճումը, որը գտնվում էր Գլխավոր դատախազության մարմինների վարույթում: Այդպիսի բողոքարկումները պետք է ներկայացվեին Գլխավոր դատախազության քննչական վարչության պետին, իսկ բացասական արդյունքի դեպքում՝ հաջորդաբար Գլխավոր դատախազի տեղակալին և Գլխավոր դատախազին: Նման բողոքարկումների արդյունավետությունը հիմնավորվում էր այն փաստով, որ 1996 թվականին 565-ից 57-ը դրական արդյունք է ստացել: Կառավարությունը չէր հստակեցրել գործերի տեսակները, որոնցով բողոքարկումները ստացել են դրական արդյունք:

Կառավարությունը փաստում է նաև, որ, Կոնվենցիայի 14-րդ հոդվածի առնչությամբ ներկայացված գանգատը պետք է մերժել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն այն չի ներկայացրել ներպետական մարմիններին:

Կառավարությունը նշում է նաև, որ նույնիսկ եթե 1997 թ. մարտի 20-ի որոշումը դիտվեր որպես վեցամսյա ժամանակահատվածի սկզբնակետ՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գանգատը պետք է մերժվեր, քանի որ Յանձնաժողովն այն ստացել էր 1997 թ. սեպտեմբերի 24-ին:

Դիմողը պատասխանել է՝ վկայակոչելով, մասնավորապես, Քուրտն ընդդեմ Թուրքիայի 1998 թ. մայիսի 25-ի վճիռը (Վճիռների և որոշումների ժողովածուներ, 1998- II) առ այն, որ հանգուցյալի մերձավոր հարազատները կարող են գանգատ բերել Կոնվենցիայի այն խախտումների կապակցությամբ, որոնք վերաբերում են մահվան պատճառ հանդիսացող գործողություններին: Նա նշում է, որ տվյալ գործը ներկայացվել էր իր որդու և իր իսկ անունից: Գործելով որպես իր որդու մերձավոր հարազատ՝ նա ներկայացրել է այնպիսի պահանջներ, որոնք իրավասու կլինեին ներկայացնելու իր որդին, եթե մահացած չլինեին հենց այն դեպքերից բխող հանգամանքների պատճառով, որոնցով գանգատ էր բերվել: Ըստ դիմողի՝ անօրինական կլինեին, եթե նման պահանջները մերժվեն միայն տուժողի մահացած լինելու փաստի կապակցությամբ: Բացի դրանից, տուժողը հանդես է եկել որպես Կոնվենցիայի ենթադրյալ խախտումների անուղղակի տուժող: Նա փաստում է, որ իր որդու նկատմամբ վատ վերաբերմունքը, նրա անօրինական ձերբակալումը և նրա նկատմամբ դրսևորված խտրականությունը իրեն պատճառել են զգալի հոգեկան տառապանք:

Ինչ վերաբերում է բոլոր ներպետական պաշտպանության միջոցների սպառված լինելուն, դիմողը բացատրում է, որ տվյալ ժամանակահատվածում Բուլղարիայի դատախազական համակարգի

բարձրագույն ստորակարգությունը բաղկացած էր ինը կամ ավելի ատյաններից: Բազմօղակ այդ համակագի ներքո գործում էին սովորական դատախազներ, շրջանային դատախազներ, շրջանային դատախազների տեղակալներ, այնուհետև դատախազներ, տարածքային դատախազներ, տարածքային դատախազների տեղակալներ և այլն: Յուրաքանչյուր դատախազ իրավասու էր անվավեր ճանաչելու ստորադաս դատախազի որոշումը: Բացի դրանից, յուրաքանչյուր դատախազ կարող էր չեղյալ համարել իր իսկ որոշումը: Չնայած այդ հանգամանքին, բոլոր այս որոշումները ուժի մեջ են մտնում նրանց հայեցողությամբ և դիմողի համար իրավունքի խնդիր չեն հանդիսանում: Դիմողը կարող է անսահմանափակ քանակությամբ բողոքներ ու պահանջներ ներկայացնել, ինչպես նաև կրկնել դրանք անսահմանափակ անգամներ, որոնց համար նա կարող է պատասխաններ ստանալ, սակայն, ըստ դիմողի, ոչ մի դեպքում չէր կարող պահանջվել, որպեսզի նա ստիպված անցներ այնպիսի անվերջ գործընթաց՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, սպառելու համար ներպետական պաշտպանության բոլոր միջոցները: Նրա կարծիքով՝ բավական էր, որ բողոքը ներկայացվել էր դատախազական համակարգի երեք հիմնական ատյաններից՝ յուրաքանչյուրին՝ շրջանային, տարածքային և հանրապետական: Նա ներկայացրել էր վերոհիշյալ բողոքները: Նա երկու անգամ բողոքարկել է Գլխավոր դատախազություն՝ մեկ անգամ 1996 թ. օգոստոսի 6-ի որոշման դեմ, համաձայն որի գործը կարճվել էր զինվորական դատախազության մարմինների կողմից, և երկրորդ անգամ՝ 1997թ. մարտի 4-ի որոշման դեմ, համաձայն որի՝ գործը կարճվել էր Գլխավոր դատախազության մարմինների կողմից: Գլխավոր դատախազությունը, այսպիսով, միջամտել էր գործին:

Դիմողը վերջապես հայտնում է, որ Կառավարության կողմից ընդգծված՝ դրական արդյունք ստացած բողոքարկումները փաստող թվերը միայն վկայում են այն մասին, որ որոշումը հազվադեպ է փոփոխվում:

Ինչ վերաբերում է վեցամսյա ժամկետին, դիմողը պատասխանում է, որ Կառավարությունը չէր սահմանել ժամկետ, երբ 1997 թ. մարտի 20-ի որոշումը պետք է ուժի մեջ մտներ: Նա հայտնում է, որ դա տեղի է ունեցել 1997 թ. օգոստոսին: Ցանկացած դեպքում, եթե նույնիսկ վեցամսյա ժամկետի սկզբնական սահմանվեր 1997 թ. մարտի 20-ը, դիմողն արդեն իսկ ուղարկել էր իր դիմումը ֆաքսի և գրանցված նամակի միջոցով 1997 թ. սեպտեմբերի 20-ին:

Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոլեկտիվ պաշտպանության համաձայնագրի առարկան և նպատակը պահանջում են, որ դրա դրույթները մեկնաբանվեն և կիրառվեն դրան հատուկ բնույթի լույսի ներքո և դրանով իսկ դրա երաշխիքները դարձնեն գործուն և արդյունավետ (տես Յասան ընդդեմ Թուրքիայի 1998 թ. սեպտեմբերի 2-ի վճիռը, Ժողովածուներ 1998- VI, էջ, կետ 64):

Դատարանը նշում է, որ Կոնվենցիայի 3-րդ, 5-րդ և 14-րդ հոդվածների հիմքով բերված գանգատները վերաբերում են 1996 թ. հունվարի 28/29 դեպքերին, երբ դիմողի որդին ձերբակալվել, իսկ ավելի ուշ հայտնաբերվել էր մահացած, և այսպիսով, սերտորեն կապված են դիմողի այլ գանգատների հետ, որոնք բխում են Կոնվենցիայի 2-րդ և 13-րդ հոդվածներից: Դատարանը, հիմնվելով Կոնվենցիայի մարմինների նախադեպային իրավունքի վրա, գտնում է, որ նման հանգամանքներում հանգուցյալի ծնողը, անկասկած, իրավասու է գանգատ ներկայացնելու՝

բուրի վիճելի հարցերի կապակցությամբ, որոնք կարող են ողբերգական դեպքերի հետևանք լինել (տես բազմաթիվ այլ մարմինների թվում, դիմում no. 7467/76, Dec. 13.12.76, DR 8, էջ 220 վերոհիշյալ Յասայի վճիռը; Տանրիկուլուն ընդդեմ Թուրքիայի [GC] no. 23763/94, ECHR 1999- Cakici ընդդեմ Թուրքիայի [GC], no. 23657/94, ECHR 1999-):

Ինչ վերաբերում է ներպետական պաշտպանության միջոցների սպառված լինելուն, Ղատարանը հայտնում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձինք, որոնք ցանկանում են պետության դեմ գանգատ ներկայացնել միջազգային դատական և արբիտրաժային մարմինների առջև, առաջին հերթին պետք է օգտագործեն ներպետական պաշտպանության միջոցները՝ նախատեսված ներպետական իրավական համակարգով՝ դրանով պետությանն ազատելով իր գործողությունների համար միջազգային մարմնի առջև պատասխան տալու պարտականությունից, քանի դեռ նրանց հնարավորություն կընձեռվեր հարցը շտկել իրենց սեփական իրավական համակարգի շրջանակներում: Տվյալ կանոնն իրականացնելու համար դիմողը պետք է պատշաճ կարգով օգտագործեր ներպետական պաշտպանության միջոցները, որոնք մատչելի և բավարար էին վիճարկվող խախտումների կապակցությամբ (տես Բուսկարինին և այլոք ընդդեմ Սան Մարինոյի [GC], no. 24645/94, կետ. 26, ECHR 1999-):

Տվյալ գործով Կառավարությունը նշում է, որ դիմողը չի բողոքարկել ոչ Հանրապետության զինվորական դատախազին, Գլխավոր դատախազության քննչական վարչության պետին, Գլխավոր դատախազի տեղակալներին, ոչ էլ Գլխավոր դատախազին: Այնուամենայնիվ, անվիճելի է թվում, որ տվյալ ժամանակահատվածում՝

Դատարանակազմության մասին օրենքին համաձայն՝ բոլոր վերոհիշյալ դատախազությունները գտնվում էին Գլխավոր դատախազության կազմում, որոնց բողոքարկել էր դիմողը: Բացի դրանից, նրա՝ 1997 թ. մարտի 10-ի բողոքարկումը, փաստորեն, հասցեագրված էր Գլխավոր դատախազին:

Կառավարության փաստարկն այն մասին, որ դիմողի գանգատները պետք է ձևակերպված լինեին Կոնվենցիայի 14-րդ հոդվածի հիման վրա, քրեական գործով տարվող նախաքննության սկզբնական փուլում, նույնպես չէր կարող ընդունելի լինել: Դատարանը համարում է, որ դիմողը պատշաճ կերպով օգտագործել է Բուլղարիայի օրենսդրությամբ նախատեսված ներպետական պաշտպանության միջոցները, և դրանով հնարավորություն է ընձեռել իշխանություններին քննության առնելու այն գանգատները, որոնք այժմ ներկայացված են Դատարանին: Այդ կապակցությամբ նա ենթարկվել է Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով կարգավորվող՝ պաշտպանության միջոցները սպառելու կանոնին (տես Ասենովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի 1998 թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, ժողովածուներ 1998-VIII, էջ 3175, կետ 86, և Ա.Վ-ն ընդդեմ Բուլղարիայի (dec.), թիվ 41488/98, ECHR 1999-):

Դատարանը եզրակացրել է նաև, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով կարգավորվող վեցամսյա ժամկետը գործում է այն օրվանից, երբ վերջնական որոշումն ուժի մեջ է մտնում, կամ երբ ներպետական օրենսդրությունը չի գործում՝ վերոհիշյալ ժամկետն սկսում է գործել այն օրվանից, երբ դիմողը կարող է տեղեկանալ դրա բովանդակությանը (տես Պապաչեւասն ընդդեմ Հունաստանի [GC] no. 31423/96, կետ 30, ECHR

1999-): Տվյալ գործով պարտադիր չէ որոշել՝ արդյոք ժամկետի սկիզբը հաշվվում է 1997 թ. մարտի 20-ից, ինչպես պնդում է Կառավարությունը, կամ 1997 թ. չճշտված ամսաթվով՝ ինչպես պնդում է դիմողը: Բավական է նշել, որ դիմողի առաջին գանգատն ուղարկվել է 1997 թ. սեպտեմբերի 20-ին, ինչպես երևում է ֆաքսի պատճենից և գանգատի պատճեն պարունակող ծրարի նամականիշից: Ելնելով վերոգրյալից, Դատարանը եզրակացրել է, որ վեցամսյա ժամկետը կարգավորող կանոնի պահանջները գործում են, եթե առաջին գանգատը ներկայացվել է սահմանված ժամկետում, չնայած որ այն կարող էր տեղ հասնել վավերական ժամկետից մի քանի օր հետո (տես Էրդոզուն և Իսսն ընդդեմ Թուրքիայի [GC], nos. 25067 և 25068/94, կետ 30, ECHR 1999-): Այսպիսով, Դատարանը համարում է, որ դիմումը ներկայացվել է վեցամսյա ժամկետում՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի:

Սրանից բխում է, որ Կառավարության կողմից ներկայացված նախնական առարկությունները պետք է մերժվեն:

2. Հիմնվելով Կոնվենցիայի 2-րդ հոդվածի վրա՝ դիմողը գանգատվում է առ այն, որ իր որդին մահացել է ոստիկանության կողմից դիտավորյալ պատճառված վնասվածքների հետևանքով, որ ոստիկանությունն իր որդու վնասվածքների համար պատշաճ բուժօգնություն չի ապահովել, որն ի վերջո հանգեցրել է նրա մահվանը, իսկ պետական մարմինները չեն ապահովել գործի արդյունավետ և պատշաճ քննություն:

2-րդ հոդվածը նախատեսում է հետևյալը՝

« 2-րդ հոդված- Կյանքի իրավունք

1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը:
2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝
 - a. ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար;
 - b. օրինական ձերբակալում իրականացնելու կամ օրինական կարգով ձերբակալված անձի փախուստը կանխելու նպատակով;
 - c. խռովությունը կամ ապստամբությունը օրենքին համապատասխան ճնշելու համար»:

Կառավարությունը հայտնում է, որ ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի որևէ ապացույց չկա: Դատական բժիշկները գտել են, որ մահացու վնասվածքը հասցվել էր Ջաբչեկովի մահվանից 10 ժամ առաջ: Կասկածից վեր է, որ Ջաբչեկովը ձերբակալումից առաջ օգտագործել էր մեծ քանակությամբ ալկոհոլ: Նա հարբած էր և օրորվում էր: Բացի դրանից, կա ակնհայտ ապացույց, որ նա մի քանի անգամ վայր է ընկել գետնին: Կառավարության տեսանկյունից՝ ձերբակալման ժամանակ նրա դրսևորած վարքագիծը հաստատում են փորձագետների եզրակացությունները՝ նրա գանգի կոտրվածքի առաջանալու պահի, վնասվածքը ստանալու «պայծառացման ընդմիջման» ընթացքում եղած ախտանիշների մասին մահվան միջև ընկած ժամանակահատվածում:

Կառավարությունը նշել է նաև, որ մինչև Ջաբչեկովի ձերբակալումը նրա գտնվելու վայրի վերաբերյալ վկաների տված ցուցմունքներում առկա են հակասություններ: Բացի դրանից, Կառավարությունը հայտնել է, որ 1995 թ. դիմողը բազմաթիվ առիթներով հայտարարել է, որ իր որդին տառապել

է գլխի հետ կապված հիվանդությունից: Ինչպես հայտնի է, Ջաբչեկովը երիտասարդ ժամանակ հաճախակի կորցրել է գիտակցությունը և շնչահեղձ եղել: 1995 թ. Ջաբչեկովն անձամբ հաստատել է, որ տառապում էր գլխացավերից և հաճախակի ուշաթափվում էր:

Կառավարությունը եզրակացրել է, որ ելնելով ձերբակալումից առաջ Ջաբչեկովի գտնվելու վայրի վերաբերյալ առկա հակասական տվյալներից, նրա քրոնիկ նյարդային հիվանդությունից և, հաշվի առնելով, որ նա գտնվել է ալկոհոլի ազդեցության տակ՝ փորձագետների այն եզրակացությունը, որ նա մահացու վնասվածքն ստացել է մեծ կոշտ մակերեսի վրա ընկնելու արդյունքում, պետք է համարվի արժանահավատ:

Պատշաճ բուժօգնության ենթադրյալ բացակայության վերաբերյալ Կառավարությունը հայտարարել է, որ ոստիկանները չեն կարող պատասխանատվություն կրել այն փաստի վերաբերյալ, որ չեն հասկացել, որ Ջաբչեկովն անհապաղ բժշկական միջամտության կարիք է ունեցել: Երբ նրանք առաջին անգամ տեսել են նրան՝ շատ մութ է եղել: Բացի դրանից, նա հարբած էր, ամբողջ մարմինը կեղտոտված էր, իսկ մազերը ծածկել էին ձախ հոնքի վերին մասի կապտուկը: Նրանք Ջաբչեկովի վիճակը վերագրել են որպես ալկոհոլի ազդեցության տակ գտնվելու արդյունքի: Նա չի գանգատվել վատառողջությունից: Դատաբժիշկական փորձագետները հաստատել են այն փաստը, որ «պայծառացման ընդմիջման» ընթացքում որևէ արտառոց արտաքին նշաններ չեն դիտարկվել:

Չետագայում Կառավարությունը հաստատել է, որ գործով կատարվել է արագ և մանրակրկիտ քննություն:

Դիմողը պատասխանել է, որ Կոնվենցիայի մարմինների կողմից ձևավորված նախադեպային իրավունքին համապատասխան՝ Կառավարությունը պարտավորվում է Ջաբչեկովի մահվան վերաբերյալ ճշգրիտ բացատրություն տալ՝ հիմք ընդունելով տվյալ օրենքի նորմը՝ առ այն, որ ոստիկանության կողմից կատարված չարաշահումներից տուժած անձն անհաղթահարելի դժվարությունների է հանդիպում իր վնասվածքների պատճառներն ապացուցելիս: Դիմողը պնդում է, որ Կառավարության բացատրությունը հակասական է և հեռու իրականությունից:

Դիմողը նշում է, որ դեպքերի կապակցությամբ Կառավարության տեսակետն ամբողջությամբ հիմնված է երկրորդ դատաբժշկական եզրակացության վրա՝ առ այն, որ մահացու վնասցածքը հասցվել է Ջաբչեկովի մահվանից առնվազն 10 ժամ առաջ: Դիմողը պնդում է, որ եզրակացությունը շատ կասկածելի է: Այն կասկածի տեղիք է տալիս՝ ելնելով մահվանից գրեթե 6 ժամ հետո կատարված դիախերձման ընթացքում վերցված լուսանկարներից: Ըստ դիմողի՝ քանի որ հաշվի չի առնվել մահվան և դիախերձման ժամերի միջև ընկած զգալի տարբերությունը, երկրորդ դատաբժշկական եզրակացության մեջ բացակայում է այն փաստը, որ արյան մակարդուկները առաջացել են դիախերձումից 10 ժամ առաջ (այսինքն՝ մոտավորապես ժամը 01.30-ին)՝ այն ժամին, երբ Ջաբչեկովը գտնվել է ոստիկանության մեկուսարանում: Բացի դրանից, իշխանությունները ոչ մի անգամ չեն բացատրել երկու դատաբժշկական եզրակացությունների միջև առկա հակասությունները,

որոնք վերաբերում են մահացու վնասվածքի հանգեցնող հարվածի ուժգնությանը, այն մակերեսին, որին բախվել է տուժողի գանգը և գանգի վնասվելու հստակ ժամանակի հարցերին:

Դիմողը նաև մերժել է Կառավարության այն պնդումը, որ Ջաբչեկովը վատառողջ է եղել իր ձերբակալման ժամանակ: Նա կարողացել է բավականին արագ վազել, երբ Ս.-ն նրան հետապնդելիս է եղել: Բոլոր այն վկաները, որոնք ցուցմունքներ են տվել 1996 թ. հունվարի 28-ին Ջաբչեկովի գտնվելու վայրի վերաբերյալ, միաձայն պնդել են, որ նա առողջ է եղել: Վկաների անհերքելի ցուցմունքները վկայում են այն մասին, որ նա շարժվել և մեքենաներին է նայել, երբ նրան հետապնդել են, և որ նա արագ վազել է ձերբակալումից խուսափելու նպատակով, հազիվ թե դրանք վատառողջ մարդու նշաններ լինեն: Ձերբակալման ժամանակ նրա կողքին գտնվող ոստիկաններից ոչ ոք վնասվածքի հետք չի նկատել: Բացի դրանից, 1997թ մարտի 4-ի որոշման մեջ հստակորեն նշվել է, որ Ջաբչեկովը ոստիկանություն բերվելու ժամանակ առողջ է եղել:

Ինչ վերաբերում է նրա բողոքին, որ Ջաբչեկովը համապատասխան բուժօգնություն չի ստացել, դիմողը պնդում է, որ վնասվածքի բավականաչափ նշաններ են եղել, որոնց առկայության դեպքում բարեխիղճ և ուշադիր ոստիկանը կհասկանար, որ ձերբակալվածը բուժօգնության կարիք ունի: Չնայած դրան, ոստիկաններն իբրև թե բուժօգնությունը չեն ապահովել արագ կերպով:

Դիմողը հիմնվում է ոստիկան Գ-ի ցուցմունքի վրա, որը նկատել է Ջաբչեկովի հոնքի վրայի կապտուկը՝ առավոտյան ժամը 1-ից շուտ: Նա այնուհետև նկատել է, որ տուժողի մոտ ցնցումներ և դող է առաջացել: Մյուս ոստիկանները նույնպես վնասվածքներ են նկատել ձերբակալվածի գլխին: Չնայած դրան, նրանք միայն առավոտյան 4:30-ին են որոշել գործել: Եվ նույնիսկ այդ ժամանակ հաղորդագրություն են ուղարկել ոչ թե հիվանդանոց կամ բժշկի, այլ այն նույն ոստիկաններին, որոնք Ջաբչեկովին ոստիկանություն են բերել: Ա-ն և Բ-ն որոշել են ոստիկանություն վերադառնալ՝ բժիշկ կանչելու փոխարեն: Ոստիկանություն հասնելով և Ջաբչեկովի վիճակը տեսնելուց հետո անգամ նրանք բժիշկ չեն կանչել, այլ ժամանակ են կորցրել գնալու հիվանդանոց՝ շտապ օգնության մեքենա և բժիշկ բերելու նպատակով: Այս ուշացումները ճակատագրական են եղել, ինչպես հաստատել են փորձագետները՝ հայտարարելով, որ «...մահը անխուսափելի է եղել, քանի որ անհապաղ վիրաբուժական միջամտություն չի եղել...»: Դիմողը պնդում է, որ Բուլղարիայում համապատասխան օրենք չկա, որը երաշխավորում է ձերբակալվածի բուժօգնություն ստանալու հնարավորությունը, և այդ թերությունն ինքնին Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում կարող է լինել:

Ըստ դիմողի՝ ակնհայտ էր, որ Ջաբչեկովի մահվան վերաբերյալ կատարված քննությունը պատշաճ չէր: Դիմողը նշում է մի շարք թերություններ: Հատկապես դատախազական մարմինները երբեք չեն անդրադարձել ոստիկանների կողմից երկարաձգված և ապօրինի ձերբակալմանը, ձերբակալման փաստի ոչ պատշաճ գրանցմանը, և գրանցամատյանում հետին թվով գրառում կատարելու միջոցով այդ թերությունները թաքցնելու ակնհայտ փորձին: Չնայած ոստիկանների այդպիսի կասկածելի և անօրինական վարքագծին՝

վերահսկող իշխանությունները հնարավորություն տվեցին նրանց իրենց ցուցմունքներում ժխտել ուժի կիրառումը Ջաբչեկովի հանդեպ: Բացի դրանից, ոստիկաններից երբեք չի պահանջվել բացատրություն տալ Ջաբչեկովի դաստակների վնասվածքների վերաբերյալ, որոնք ավելի լուրջ էին, և հազիվ թե ձեռնաշղթաների պատճառով լինեին: Ոչ ոք նույնիսկ չի փորձել պարզել ոստիկանների տարօրինակ վարքագիծը ժամը 4.30-ից 5-ն ընկած ժամանակահատվածում, և հատկապես այն հարցը, թե ինչու նրանք անմիջապես շտապ օգնություն չէին կանչել: Ոչ ոք չի պարզել, թե ինչու են երկու բժիշկները վիճել, երբ հաստատել են, որ Ջաբչեկովը մահացել է: Վերջապես, դիմողի ընտանիքին Ջաբչեկովի մահվան վերաբերյալ տված տեղեկատվության մեջ ակնհայտորեն ոչինչ ասված չէր այն մասին, որ տղան ձերբակալված է եղել:

Դիմողը նաև պնդում է, որ քննությունը չի համաձայնեցրել երկու

բժշկական եզրակացությունները, կամ էլ բացատրել դրանցից երկրորդն

ընդունելու փաստը: Եզրակացություն տվող բժշկին երբևէ չեն հարցրել,

թե ինչու են է կայանում նրա կարծիքի բացահայտ փոփոխությունը:

Դատական բժիշկներին ոչ մի անգամ չեն հարցրել, արդյոք նրանք

անհրաժեշտ են համարել արտաշիրմում կատարելը, որը բազմիցս

պահանջել է դիմողը: Բացի դրանից, փորձագետներին չեն հարցրել`

արդյոք Ջաբչեկովի ստացած գլխի վնասվածքից տուժած որևէ անձ ի

վիճակի էր տեղաշարժվելու, ավելին` ոստիկանից փախչելու:

Քննարկելով դիմողի` Կոնվենցիայի 2-րդ հոդվածի հիման վրա ներկայացրած գանգատները` Դատարանը գտել է, որ դրանք պարունակում են փաստի և իրավունքի լուրջ հարցեր, որոնք այնքան բարդ են, որ դրանց որոշումը կախված կլինի ըստ էության քննարկումից: Այդ պատճառով դիմումի այս մասը չի կարող դիտվել որպես ակնհայտորեն անհիմն` Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, և այն անընդունելի հայտարարելու ոչ մի այլ հիմնավորում չկա:

3. Հիմնվելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վրա` դիմողը գանգատվում է առ այն, որ իր որդին ստացել է վնասվածքներ, որոնք ակնհայտորեն ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի արդյունք էին, և որ իշխանություններն այս առնչությամբ չեն անցկացրել արդյունավետ և անաչառ քննություն:

3-րդ հոդվածն ամրագրում է.

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, կամ պատժի»:

Կառավարությունը նշում է, որ վատ վերաբերմունքի որևէ ապացույց չկա: Ջաբչեկովի կրծքավանդակի և դեմքի վրայի վնասվածքները կարող էին

արդյունք լինել գետնին վայր ընկնելու, իսկ դաստակի վնասվածքները կարող էին պատճառված լինել ձեռնաշղթայից:

Դիմողը պատասխանում է, որ փախչելու ընթացքում գետնին վայր ընկած անձը հավանականորեն վնասվածք կստանար ձեռքերի և արմունկների վրա, քանի որ կփորձեր մարմնի և գետնի միջև կանխատեսվող հարվածը մեղմացնել: Այնուամենայնիվ, տվյալ գործում, նման վնասվածքների հետքեր չեն հայտնաբերվել: Փոխարենը՝ վնասվածքներ էին առկա կրծքավանդակի և թևատակի վրա: Բացի այդ, դաստակների վնասվածքները շատ ավելի լուրջ էին և հազիվ թե ձեռնաշղթայի առկայության պատճառ լինեին: Դիմողը ընդգծել է նաև, որ քննության ոչ մի փուլում փորձ չի արվել բացատրություն տալ Չաբչեկովի մարմնի վրայի ոչ մահացու վնասվածքների վերաբերյալ: Ոչ մի կարծիք չի ներկայացվել նաև դրանց պատճառման ժամանակի վերաբերյալ: Իշխանություններն իբրև թե իրենց պարտականությունը չեն համարել հետազոտելու այդ վնասվածքների առաջացման պատճառները:

Քննարկելով դիմողի գանգատները՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հիման վրա, Դատարանը գտել է, որ դրանք պարունակում են փաստի և իրավունքի լուրջ հարցեր, որոնք այնքան բարդ են, որ դրանց որոշումը կախված կլինի գործի ըստ էության քննությունից: Այդ պատճառով դիմումի այս մասը չի կարող դիտվել որպես ակնհայտորեն անհիմն՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, և այն անթույլատրելի հայտարարելու ոչ մի այլ հիմնավորում չկա:

4. Հիմնվելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի վրա՝ դիմողը գանգատվում է առ այն, որ իր որդուն՝ 1996 թ. հունվարի 29-ի ձերբակալումն անօրինական էր:

Կառավարությունը նշում է, որ ոստիկանություն բերման ենթարկվելու ժամանակ Չաբչեկովը «ձերբակալված անձ» չի դիտվել՝ Ազգային ոստիկանության մասին օրենքի 35-րդ բաժնի իմաստով, քանի որ նրա ինքնությունը պարզված չէր: Անհրաժեշտ է եղել սպասել՝ մինչև նա ուշքի կգար, որպեսզի պարզվեր նրա ինքնությունը և այնուհետև որոշել՝ արդյոք անհրաժեշտ է ձերբակալումը: Այդ պատճառով ձերբակալման գրավոր որոշումը չէր պահանջվել: Նման որոշում չի կարող ընդունվել այն անձանց վերաբերյալ, որոնց ինքնությունը պարզված չէ:

Կառավարությունը հետագայում հայտնել է, որ ամեն դեպքում օրինական ձերբակալման համար առկա են եղել փաստացի իրավական նախապայմաններ: Չաբչեկովը ձերբակալվել է գողություն կատարելու փորձի համար և տարվել է ոստիկանություն՝ ինքնությունը պարզելու նպատակով:

Դիմողը պատասխանում է, որ անհեթեթ է համարել, որ ձերբակալման համար օրենքով նախատեսված 24-ժամյա ժամկետն սկսվում է այն պահից, երբ պարզ է դառնում ձերբակալված անձի ինքնությունը: Բուլղարիայի օրենսդրությամբ այդպիսի կանոն սահմանված չէ: Այդ պատճառով, առանց գրավոր որոշում ներկայացնելու, ցանկացած ձերբակալում պարզապես Ազգային ոստիկանության մասին օրենքի 35-րդ բաժնի խախտում է հանդիսանում: Բացի դրանից, ցուցմունքներից մեկից երևում է, որ ոստիկաններից մեկը ճանաչել է Չաբչեկովին, և երբ առաջին անգամ տեսել է նրան՝ դիմել է անունով:

Քննարկելով դիմողի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի հիման վրա գանգատները Դատարանը գտել է, որ դրանք պարունակում են փաստի և իրավունքի լուրջ հարցեր, որոնք այնքան բարդ են, որ դրանց որոշումը կախված կլինի գործի ըստ էության քննությունից: Այդ պատճառով գանգատի այս մասը չի կարող դիտվել որպես ակնհայտորեն անհիմն՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, և այն անթույլատրելի հայտարարելու ոչ մի այլ հիմնավորում չկա:

5. Հիմնվելով Կոնվենցիայի 13-րդ հոդվածի վրա՝ դիմողը գանգատվում է առ այն, որ ինքը չի ունեցել արդյունավետ պաշտպանության միջոց՝ 2-րդ և 3-րդ հոդվածների վիճարկվող խախտումների կապակցությամբ:

Կառավարությունը նշում է, որ դիմողը կարող էր բողոքարկել՝ մասնակցելով իր որդու մահվան փաստով տարվող քրեական գործի քննությանը որպես ոչ պաշտոնական մեղադրող կամ քաղաքացիական հայցվոր: Ցանկացած դեպքում նրան հնարավորություն է ընձեռվել տեղեկանալու քրեական գործին և բողոքներ ու պահանջներ ներկայացնել քննության հետագա ընթացքի կապակցությամբ: Արտաշիրմուն կատարելու նրա պահանջն իրավացիորեն մերժվել էր, քանի որ հստակ պարզաբանված էր, որ Ձաբչեկովի կողերը վնասված չէին:

Դիմողը պատասխանում է, որ համաձայն 13-րդ հոդվածի՝ Կառավարության դիրքորոշումն անկախ է դիմողի ցանկացած գործողություններից և վկայակոչում է նրա կողմից բերված փաստարկները, ինչպես ներկայացված են նրա սկզբնական գանգատում:

Նա նշում է, որ քանի որ դատախազական մարմինները գործով չեն իրականացրել մանրակրկիտ և արդյունավետ քննություն, այն ավելի լայն է արձագանքվում միջազգային կազմակերպությունների կողմից: Նա վկայակոչում է Միացյալ ազգերի Մարդու իրավունքների հանձնաժողովի՝ խոշտանգումների հարցերով հատուկ զեկուցողի զեկույցը (Միացյալ ազգերի 1997 թ. հունվարի 10-ի փաստաթուղթ E/CN.4/1997/7), որի 9-րդ էջում նշվում է՝ «Հատուկ զեկուցողն անհանգստացած է ձերբակալված անձանց նկատմամբ [Բուլղարիայում] վատ վերաբերմունքի կամ խոշտանգումների դեպքերի հաճախականությամբ, որոնք երբեմն հանգեցնում են այդ անձանց մահվան: Ցանկացած կարգապահական բնույթի միջոցառումների հազվադեպությունը, պատասխանատու անձանց արդյունավետ հետապնդման բացակայությունը միայն կարող են ստեղծել անպատժելիության մթնոլորտ: Նա հավատում է, որ Կառավարությունը միջոցներ կձեռնարկի անկողմնակալ հսկողություն սահմանելու ձերբակալման, կալանավորման, հարցաքննության ընթացակարգերի նկատմամբ»:

Դիմողն առարկում է նաև, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջները կատարելու համար ղեկավար մարմինները, որոնք իրավունակ են ապահովելու պաշտպանության միջոցների կիրառումը, պետք է բավականաչափ անկախ լինեն վիճարկվող խախտումների համար պատասխանատու մարմիններից: Այնուամենայնիվ, իրականում, Բուլղարիայում այդպիսի անկախություն գոյություն չունի, քանի որ դատախազությունը գործում է երկակի լիազորություններով և, հաշվի առնելով մինչ օրս պահպանված կարգը և վերաբերմունքը՝ ժառանգված այն ժամանակներից, երբ ոստիկանության և քննչական մարմինները հանդես էին գալիս որպես մեկ մարմին: Բացի դրանից, տվյալ ժամանակահատվածում քրեական գործը կասեցնելու մասին դատախազի որոշման դեմ իրավական պաշտպանության որևէ միջոց չկա:

Քննարկելով դիմողի գանգատները՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի հիման վրա՝ Դատարանը գտել է, որ դրանք պարունակում են փաստի և իրավունքի լուրջ հարցեր, որոնք այնքան բարդ են, որ դրանց որոշումը կախված կլինի գործի ըստ էության քննությունից: Այդ պատճառով դիմումի այս մասը չի կարող դիտվել որպես ակնհայտորեն անհիմն՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, և այն անընդունելի հայտարարելու ոչ մի այլ հիմնավորում չկա:

6. Դիմողը գանգատվում է առ այն, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 14-րդ հոդվածին հակասող խտրականություն:

Կառավարությունը նշում է, որ ռասայական պատկանելության հիմքով խտրականության ապացույց չկա: Այն փաստը, որ որոշ ցուցմունքներում Ձաբչեկովը մատնաշված է իբրև «զնչու», նման ապացույց չի հանդիսանում:

Դիմողը պատասխանում է, որ Ձաբչեկովի հանդեպ վերաբերմունքը՝ կապված նրա էթնիկական ծագման հետ, և քննչական մարմինների ու ոստիկանության գործողությունները պետք է դիտել որպես շարունակական բնույթ կրող ազգային խտրականության և թշնամանքի լայնածավալ բնույթ կրող իրավիճակ, որը շարունակաբար ցուցաբերում են Բուլղարիայի իրավապահ մարմինները: Այս երևույթը բազմիցս փաստվել է ոչ կառավարական և մարդու իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունների կողմից:

Քննարկելով դիմողի գանգատները՝ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի հիման վրա՝ Դատարանը գտել է, որ դրանք պարունակում են փաստի և իրավունքի լուրջ հարցեր, որոնք այնքան բարդ են, որ դրանց որոշումը կախված կլինի ըստ էության քննությունից: Այդ պատճառով դիմումի այս մասը չի կարող դիտվել որպես ակնհայտորեն անհիմն՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, և այն անընդունելի հայտարարելու ոչ մի այլ հիմնավորում չկա:

Այս հիմքերով՝ Դատարանը միաձայն

ԸՆԴՈՒՆԵԼԻ Է ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ, առանց գանգատն ըստ էության գնահատելու:

Վինսենտ Բերգեր
Քարտուղար

Ջորջ Ռես
Նախագահ